

**Ապրանքների մաքսային արժեքը՝ ներմուծվող ապրանքների հետ կապված
գործարքի գնի հիման վրա որոշելու մեթոդը կիրառելու մասին**

26.12.2012թ.

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 283 որոշում**

«Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացված «Ապրանքների մաքսային արժեքը՝ ներմուծվող ապրանքների հետ կապված գործարքի գնի հիման վրա որոշելու մեթոդը կիրառելու մասին» Կանոնները:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Նախագահ՝

Վ. Բ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի
դեկտեմբերի 20-ի թիվ 283 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

**Ներմուծվող ապրանքների հետ կապված գործարքի արժեքի հիման վրա
ապրանքների մաքսային արժեքը սահմանելու մեթոդի կիրառման վերաբերյալ
(1-ին մեթոդ)**

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնները կիրառվում են 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի (այսուհետ՝ «Համաձայնագիր») 4-րդ հոդվածով սահմանված՝ ներմուծվող ապրանքների հետ կապված գործարքի արժեքի հիման վրա ապրանքների մաքսային արժեքը որոշելիս:

2. Սույն Կանոնները մշակվել են Համաձայնագրի, 1994 թվականի «Սակագների եւ առետրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի դրույթների, այդ թվում՝ դրան կից բացատրական նշումների, ինչպես նաեւ Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային գնահատման հարցերով տեխնիկական կոմիտեի փաստաթղթերի հիման վրա՝ 1-ին մեթոդի միասնական կիրառումն ապահովելու նպատակով:

3. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Մաքսային միության ընդհանուր մաքսային տարածք (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածք) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի

արժեքն է, այսինքն՝ այն գինը, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման՝ այդ ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու նպատակով վաճառելիս եւ որը լրացվել է սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանների կատարման դեպքում:

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու նպատակով ապրանքների վաճառքը նշանակում է, որ ապրանքները համարվում են առքուվաճառքի առարկա՝ արտաքին տնտեսական համաձայնագրին (պայմանագիր)(այսուհետ՝ առքուվաճառքի գործարք) համապատասխան:

4. Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինն այդ ապրանքների համար գնորդի կողմից վաճառողին կամ վաճառողի օգտին կատարված կամ կատարման ենթակա ընդհանուր վճարումն է: Ընդ որում, վճարումը կարող է կատարվել ոչ միայն դրամական միջոցների փոխանցման, այլ նաեւ վարկագրերով կամ ֆինանսական գործիքներով (արժեթուղթ, պարտատոմս, չեկ, հասարակ կամ փոխանցումային մուրհակ, պահանջագիր, երաշխավորագիր, վկայական եւ այլն): Փոխկապակցված անձանց հետ գործարքներ կնքելու դեպքում վաճառողի եւ գնորդի միջեւ հաշվարկները նույնպես կարող են իրականացվել առանց դրամական միջոցների փաստացի փոխանցման, ինչը հաստատվում է հաշվապահական փաստաթղթերով:

Նշված վճարումները կարող են իրականացվել ոչ միայն ուղղակիորեն, այսինքն՝ անմիջապես վաճառողին, այլ նաեւ անուղղակիորեն, այսինքն՝ երրորդ անձին՝ վաճառողի օգտին, օրինակ՝ վաճառողի պարտքի ամբողջական կամ մասնակի մարման ձեւով:

Գնորդի կողմից գնորդի հաշվին ձեռնարկած գործողություններով պայմանավորված ծախսերը, բացառությամբ այն ծախսերի, որոնք, Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն, լրացուցիչ հաշվեգրվում են այն արժեքին, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման, չեն դիտարկվում

որպես անուղղակի վճարման ձեռնարկ այն դեպքում, երբ այդ գործողությունները ձեռնարկվել են՝ վաճառողի շահերից ելնելով, եւ մաքսային արժեքը որոշելիս այդ գործողությունների արժեքը չի ավելացվում փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին:

5. Ներմուծվող այն ապրանքների մաքսային արժեքը սահմանելու համար, որոնց համար ապրանքների մասին հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցման օրը գինը փաստացի չի վճարվել, որպես հիմք ծառայում է այն արժեքը, որը ենթակա է վճարման՝ այդ ապրանքների համար առքուվաճառքի գործարքի համաձայն:

II. 1-ին մեթոդի կիրառման պայմանները

6. Այն դեպքերում, երբ ներմուծվող ապրանքները առքուվաճառքի առարկան չեն, դրանց մաքսային արժեքները որոշելու նպատակով 1-ին մեթոդը չի կիրառվում:

Մասնավորապես, այդպիսի դեպքերը տեղի են ունենում Մաքսային միության մաքսային տարածք ապրանք ներմուծելիս, եթե սահմանված են՝

անհատույց պայմանագրերով, մասնավորապես՝ նվիրատվության պայմանագրերով, անհատույց մատակարարման (օրինակ՝ գովազդային վահանակների, ցուցադրվող օրինակների անհատույց տրամադրում) եւ վարձակալության պայմանագրով.

միջնորդության պայմանագրերով, մասնավորապես՝ կոմիսիոն պայմանագրով, գործակալի պայմանագրով, որոնցով գինը չի նշվում, որի համաձայն, ապրանքները վաճառվում են Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու դեպքում.

փոխառության պայմանագրերով, ապրանքային վարկերով, որոնցով ապրանքները կամ դրանց համարժեք ապրանքները ենթակա են վերադարձման

սեփականատիրոջը.

փորձաքննության անցկացման, համապատասխանության գնահատման (հաստատման) (այդ թվում՝ հետազոտության, փորձարկման, ստուգումների, փորձարկությունների եւ հատկանիշների ու առանձնահատկությունների ցուցադրման) համար.

կանոնադրական կապիտալում (ֆոնդում) ներդրում կատարելիս:

7. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը՝ ըստ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի եւ 5-րդ հոդվածի 3-րդ կետի, որոշվում է 1-ին մեթոդով՝ հավաստի, քանակապես որոշելի եւ փաստաթղթերով հաստատվող տեղեկությունների, ինչպես նաեւ այնպիսի տեղեկությունների առկայության դեպքում, որոնք անհրաժեշտ են՝ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի հաստատման, ինչպես նաեւ այդ գնին հավելյալ հաշվեգրումներ կատարելու համար:

8. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է 1-ին մեթոդով՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվող հետեւյալ պայմանների կատարման դեպքում՝

ա) գնորդի՝ ապրանքների օգտագործման եւ տնօրինման իրավունքների նկատմամբ սահմանափակումներ չկան:

Օրինակ՝ կարող են իրականացվել այնպիսի գործարքներ, որոնց պայմանների համաձայն, գնորդի իրավունքները տվյալ ապրանքների նկատմամբ սահմանափակված են, չնայած նրան, որ նա դարձել է այդ ապրանքների նոր սեփականատերը:

Գնորդի իրավունքների՝ ներմուծվող ապրանքների օգտագործման եւ տնօրինման նկատմամբ սահմանափակումների առկայությունը չի բացառում 1-ին մեթոդի կիրառումը, եթե այդպիսի սահմանափակումները՝

սահմանվել են Մաքսային միության մարմինների համատեղ որոշմամբ.

սահմանափակում են այն աշխարհագրական տարածաշրջանը, որտեղ ապրանքները կարող են վերավաճառվել.

էականորեն չեն ազդում ապրանքների արժեքի վրա:

Օրինակ՝ Վաճառողն ավտոմեքենաներ գնողից պահանջում է չվաճառել կամ չցուցադրել դրանք՝ նախքան նախանշված օրը, որը նմուշի արտադրման փարվա սկիզբն է: Վերոնշյալ սահմանափակումն էականորեն չի ազդում ավտոմեքենաների արժեքի վրա, այդ պատճառով էլ կիրառելի է 1-ին մեթոդը:

Բոլոր այն դեպքերում, երբ գործարքի պայմանների վերլուծության արդյունքում ի հայտ են գալիս գնորդի՝ ներմուծվող ապրանքների օգտագործման եւ տնօրինման իրավունքների նկատմամբ սահմանափակումներ, 1-ին մեթոդի կիրառման հնարավորության հիմնական չափանիշն այդ սահմանափակման բնույթը (էությունը) եւ այդ ապրանքի՝ փաստացի վճարված կամ նմանատիպ ապրանքների համար վճարման ենթակա գնի վրա դրա ազդեցությունն է: 1-ին մեթոդը կիրառելի է, եթե այդպիսի սահմանափակումը չի ազդել նշված արժեքի վրա կամ այդպիսի ազդեցության աստիճանը չնչին է, ինչը հաստատվում է փաստաթղթերով:

բ) ներմուծվող ապրանքների վաճառքը կամ դրանց գինը կախված չէ որեւէ պայմանից կամ պարտավորությունից, որի ազդեցությունը ապրանքների գնի վրա չի կարող քանակապես որոշվել:

1-ին մեթոդը չի կիրառվում, եթե առքուվաճառքի գործարքով նախատեսվում է այնպիսի պայման, որն ազդում է ներմուծվող ապրանքների վաճառքի կամ գնի վրա, սակայն, միեւնույն ժամանակ հնարավոր չէ որոշել եւ փաստաթղթերով հաստատել դրա քանակական (այսինքն՝ գնային արտահայտությունը) ազդեցությունն այդ ապրանքների գնի վրա:

Մասնավորապես, առքուվաճառքի գործարքի իրականացման ժամանակ կարող է նախատեսվել հետեւյալը՝

վաճառողը ներմուծվող ապրանքների գինը սահմանում է այն պայմանով, որ գնորդը կգնի նաեւ հատկորոշված քանակներով այլ ապրանքներ.

ներմուծվող ապրանքների գինը կախված է այն գնից (գներից) որով ներմուծվող ապրանքների գնորդը ներմուծված ապրանքների վաճառողին այլ ապրանքներ է վաճառում.

գինը սահմանվում է՝ հիմնվելով ներմուծվող ապրանքների նկատմամբ կողմնակի վճարման ձեւի վրա, ինչպես օրինակ, երբ ներմուծվող ապրանքները կիսավարտ ապրանքներ են, որոնք վաճառողը տրամադրել է այն պայմանով, որ վաճառողը կստանա վերջնական ապրանքի հատկորոշված քանակ.

ներմուծվող ապրանքների գինը սահմանվում է՝ կախված գնորդի կողմից այդ ապրանքները վաճառողին որոշակի ծառայությունների մատուցումից:

Նման դեպքերում ներմուծվող ապրանքների գնի վրա ազդում են տվյալ գնորդին կոնկրետ վաճառքի հետ կապված անհատական բնույթի որոշակի պայմաններ: Այսպիսով՝ ազատ, մրցակցային շուկայում համապատասխան ապրանքների համար գոյություն ունեն սովորական առետրային գործելակերպից որոշակի շեղումներ:

Գործարքի պայմանների գնային գնահատում իրականացնելու հնարավորության դեպքում, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հաշվարկելիս անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ: Այս դեպքում 1-ին մեթոդը կիրառելի է:

Ներմուծվող ապրանքների արտադրությանը կամ շուկայահանմանը վերաբերող պայմանների առկայությունը չի բացառում 1-ին մեթոդի կիրառումը, այդ թվում՝ եթե գնորդը վաճառողին տրամադրում է Մաքսային միության մաքսային տարածքում իրականացված ծրագրային փաստաթղթեր կամ իր հաշվին իրականացնում է ներմուծվող ապրանքների շուկայահանում (այդ թվում նաեւ՝ վաճառողի հետ համաձայնությամբ) եւ շուկայահանման հետ կապված

ծախսերը չեն մտնում գործարքի մեջ:

գ) ապրանքների հետագա վաճառքի, գնորդի կողմից այլ կերպ տնօրինելու կամ օգտագործելու արդյունքում ստացված եկամտի կամ հասույթի ոչ մի մաս ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի հատկացվում վաճառողին, բացառությամբ այն դեպքերի, երբ Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն, կարող են կատարվել լրացուցիչ հավելագրումներ:

Այսպիսով, առքուվաճառքի պայմաններով կարող է նախատեսվել, որ գնորդը պարտավոր է վաճառողին փոխանցել ներմուծվող ապրանքների վաճառքից ստացված հասույթից որոշակի մաս:

Եթե տվյալ պայմանը ձեակերպված է այնպես, որ հնարավոր է որոշել գումարի գնային արտահայտությունը, որը ենթակա է փոխանցման՝ ներմուծվող ապրանքներ վաճառողին եւ իրականացնել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին լրացուցիչ հավելագրումներ, ապա 1-ին մեթոդը կիրառելի է: Այնուամենայնիվ, եթե հնարավոր չէ որոշել փոխանցման ենթակա գումարի գնային արտահայտությունը (օրինակ՝ սահմանված է որոշակի տոկոս ենթադրյալ եկամտից, որի մեծությունը հայտնի չէ ապրանքների վերաբերյալ հայտարարագրի գրանցման օրը), ապա 1-ին մեթոդը կիրառելի չէ:

դ) գնորդը եւ վաճառողը փոխկապակցված անձինք չեն, կամ գնորդը եւ վաճառողն այնպես են փոխկապակցված մեկը մյուսի հետ, որ ներմուծվող ապրանքների հետ իրականացվող գործարքի արժեքն ընդունելի է մաքսային նպատակների համար՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ, 4.1 եւ 4.2 կետերին համապատասխան:

Գնորդը եւ վաճառողը համարվում են փոխկապակցված անձինք, եթե Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նշված անձինք բավարարում են հետեւյալ պայմաններից առնվազն մեկը՝

մեկը մյուսի ընկերությունում աշխատակից կամ տնօրեն (ղեկավար) են,

իրավաբանորեն ճանաչված գործընկերներ են, այսինքն՝ միմյանց հետ կապված են պայմանագրային հարաբերություններով, գործում են շահույթ ստանալու նպատակով եւ միասին կրում են իրենց համատեղ գործունեության իրականացման հետ կապված ծախսերն ու վնասները,

գործատու կամ աշխատող, որեւէ անձ է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում, վերահսկում կամ երկուսի՝ շրջանառության մեջ դրված քվեարկող բաժնետոմսերի հինգ եւ ավելի տոկոսի բաժնետերն է,

նրանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է մյուսին, երկուսն էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդ անձի կողմից, նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին, ազգականներ կամ մեկ ընտանիքի անդամներ են:

III. Ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի նկատմամբ լրացուցիչ հաշվեգրումները

9. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը 1-ին մեթոդի հիման վրա որոշելիս՝ այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացվում են՝

ա) հետեւյալ ծախսերն այնքանով, որքանով դրանք կատարված են կամ ենթակա են կատարման գնորդի կողմից, սակայն ներառված չեն ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ.

միջնորդների (գործակալների) եւ բրոքերների վարձատրությունները՝ բացառությամբ գնման համար վարձատրությունից, որը գնորդի կողմից վճարվում է իր գործակալին (միջնորդին)՝ արտերկրում նրա ներկայացմամբ մատուցած՝ ներմուծվող ապրանքների գնման մասով ծառայությունների համար,

տարայի հետ կապված ծախսերը, եթե այն մաքսային նկատառումներով դիտարկվում է որպես ներմուծվող ապրանքների անբաժանելի մաս,

փաթեթավորման ծախսերը՝ ներառյալ փաթեթավորման նյութերի եւ փաթեթավորման աշխատանքների արժեքները,

բ) գնորդի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն վաճառողին տրամադրված հետեւյալ այն ապրանքների եւ ծառայությունների՝ համապատասխան ձեռով բաշխված արժեքը, որոնք տրամադրվել են վաճառողին անվճար կամ իջեցված գնով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների արտահանման համար դրանց արտադրության եւ վաճառքի հետ կապված՝ օգտագործման նպատակով՝ այնքանով, որքանով այն ներառված չէ ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ.

հումք, նյութեր, դետալներ, կիսաֆաբրիկատներ եւ նմանատիպ առարկաներ, որոնցից բաղկացած են ներմուծվող ապրանքները,

գործիքներ, դրոշմներ, կաղապարներ եւ նմանատիպ այլ առարկաներ, որոնք օգտագործվել են ներմուծվող ապրանքների արտադրության ժամանակ,

նյութեր, որոնք օգտագործվել են ներմուծվող ապրանքների արտադրության ժամանակ, Մաքսային միության տարածքից դուրս կատարված եւ ներմուծվող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ նախագծում, մշակում, ինժեներակոնստրուկտորական աշխատանքներ, գեղարվեստական ձեւավորում, դիզայն, էսքիզներ եւ գծագրեր,

գ) ներմուծվող ապրանքների հետագա վաճառքից, այլ եղանակով տնօրինման կամ օգտագործման արդյունքում ստացված եկամտի (հասույթի) մի մասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վաճառողին հասանելիք գումարն է,

դ) ապրանքները՝ մինչեւ Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող օդանավակայան, նավահանգիստ կամ ապրանքների ժամանման այլ վայր տեղափոխելու (փոխադրելու) ծախսերը,

ե) ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման ժամանակ կատարվող ծախսեր,

Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող օդանավակայան, նավահանգիստ կամ ապրանքների ժամանման այլ վայր դրանց տեղափոխման (փոխադրման) հետ կապված այլ գործողությունների կատարման ծախսերը,

զ) սույն կետի «դ» եւ «ե» ենթակետերում նշված գործողությունների ապահովագրության հետ կապված ծախսերը,

է) մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման համար թույլտվության (ռոյալթի) եւ նմանատիպ այլ վճարումներ (ներառյալ արտոնագրերի, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքների համար կատարվող վճարումները), որոնք վերաբերում են ներմուծվող ապրանքներին եւ որոնք գնորդը, որպես ներմուծվող ապրանքների վաճառքի պայման, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարել է կամ պետք է կատարի՝ այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ չներառված չափով:

10. Սույն Կանոնների 9-րդ կետի «բ» ենթակետի 3-րդ պարբերության մեջ սահմանված առարկաների արժեքը որոշելիս՝ պետք է հաշվի առնել ներմուծվող ապրանքների նկատմամբ առարկաների արժեքը եւ դրանց բաշխման եղանակը: Առարկաների արժեքի համապատասխան բաշխումը պետք է իրականացվի ողջամիտ կերպով, կիրառելի լինի որոշակի հանգամանքներում՝ կախված հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) մոտ գտնվող փաստաթղթերից եւ հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան:

Եթե գնորդը ձեռք է բերում առարկաները գնորդի հետ չփոխկապակցված անձից՝ որոշակի գնով, ապա առարկաների արժեքները ճանաչվում են որպես ձեռքբերման գծով ծախս: Եթե առարկաներն արտադրվել են գնորդի կամ գնորդի հետ փոխկապակցված անձի կողմից, ապա առարկաների արժեքը ճանաչվում է

որպես արտադրման գծով ծախս: Այն դեպքում, եթե առարկաները նախկինում օգտագործվել են գնորդի կողմից՝ անկախ դրանց՝ գնորդի կողմից ձեռք բերված կամ արտադրված լինելու հանգամանքից, ձեռքբերման կամ արտադրության ելակետային գինը ենթակա է նվազեցման, այդ առարկաների օգտագործումը հաշվի առնելով՝ դրանց արժեքն ստանալու (որոշելու) համար:

Առարկաների արժեքը որոշելուց հետո այն ենթակա է գնորդի կողմից բաշխման՝ հետեւյալ եղանակներից մեկով՝

առարկաների արժեքը բաշխվում է ներմուծվող ապրանքների առաջին խմբաքանակին.

առարկաների արժեքը բաշխվում է ապրանքների միավոր քանակի վրա, որոնք արտադրվել են մինչեւ ներմուծվող ապրանքների առաջին խմբաքանակի բեռնառաքման պահը.

առարկաների արժեքը բաշխվում է առքուվաճառքի պայմաններին համապատասխան վաճառվող ապրանքների ամբողջ քանակին:

Օրինակ. Որպես վերոնշյալի օրինակ՝ ներմուծողն արտադրողին տրամադրում է կադասար, որը պետք է օգտագործվի ներմուծվող ապրանքների արտադրության մեջ, եւ պայմանագիր է կնքում արտադրողի հետ՝ 10000 միավոր գնելու համար: Ներմուծվող ապրանքների 1000 միավորից բաղկացած առաջին առաքման ժամանման պահին արտադրողն արդեն արտադրել է 4000 միավոր: Տվյալ դեպքում կադասարի արժեքը կարող է բաշխվել 1000 միավորի, 4000 միավորի կամ 10000 միավորի վրա:

11. Սույն Կանոնների 9-րդ հոդվածի «բ» ենթակետի 5-րդ պարբերության մեջ նշված ապրանքների եւ ծառայությունների համար ավելացման ենթակա արժեքը որոշելիս՝ պետք է հնարավորության սահմաններում օգտագործել գնորդի հաշվապահական հաշվառման փաստաթղթերում առկա տվյալները՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն համընդհանուր հաշվապահական հաշվառման սկզբունքներին:

Գնորդի կողմից տրամադրված ապրանքների եւ ծառայությունների դեպքում, որոնք գնորդը ձեռք է բերել կամ վարձակալել է, ավելացումները կատարվում են նման ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերման կամ վարձակալության ծախսերի մասում: Եթե գնորդի կողմից տրամադրվել են ապրանքներ եւ ծառայություններ, որոնք հանրային սեփականության, այսինքն՝ պետական կամ մունիցիպալ սեփականության մաս են կազմում, ապա լրացուցիչ հաշվեգրումները կատարվում են դրանց պատճենների ստացման հետ կապված արժեքի (ծախքերի) մասով:

Ապրանքների եւ ծառայությունների՝ ավելացման ենթակա արժեքի հաշվարկը կախված է առանձին ընկերության կառուցվածքից եւ կառավարման գործելակերպից, ինչպես նաեւ դրա հաշվապահական հաշվառման եղանակներից:

Օրինակ. Ընկերությունը փարատեսակ ապրանքներ է ներմուծում Մաքսային միության մաքսային փարածք Գերմանիայից, Ֆրանսիայից եւ Մեծ Բրիտանիայից: Նշված ապրանքների արտադրման համար, Մաքսային միության մաքսային փարածքից դուրս գտնվող իր նախագծման կենտրոնի կողմից տրամադրվել են Գերմանիայում, Ֆրանսիայում եւ Մեծ Բրիտանիայում համապատասխան ընկերությունների կողմից այդ ապրանքների արտադրության ժամանակ օգտագործման համար նախագծեր: Ընդ որում, նախագծման կենտրոնի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը թույլ է տալիս ներմուծող կազմակերպությանը առանձին յուրաքանչյուր ապրանքի գծով նախագծի գնի վերաբերյալ փոփոխություններ տրամադրել: Տվյալ դեպքում, փոփոխությունների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին հավելագրումները կարող են իրականացվել ուղղակիորեն նախագծման կենտրոնի կողմից ստացված փոփոխությունների հիման վրա:

Մեկ այլ դեպքում, նախագծման կենտրոնի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը թույլ է տալիս տրամադրել փոփոխություններ ընդհանուր ծախսերի մասին՝ առանց առանձին ապրանքների վրա բաշխելու: Ընդ որում, ներմուծվող

ապրանքների գծով հավելագրումներն իրականացվում են՝ նախագծման կենտրոնի ընդհանուր ծախսերը բաշխելով նախագծման կենտրոնից օգտվող ամբողջ արտադրության վրա եւ այդ բաշխված ծախսն ավելացնելով ներմուծումներին՝ միավորի հիմունքով:

Ապրանքների եւ ծառայությունների արժեքը որոշելիս անհրաժեշտ է անհատական մոտեցում դրսեւորել ցանկացած դեպքի եւ դիտարկել տարբեր գործոններ, որոնք կարող են ազդել նման բաշխման վրա: Այն դեպքերում, երբ գնորդի կողմից տրամադրված ապրանքներն ու ծառայություններն իրականացվել են տարբեր երկրներում որոշակի ժամանակի ընթացքում, Մաքսային միության մաքսային տարածքից դուրս իրականացված նշված ապրանքների եւ ծառայությունների արժեքն ավելանում է:

12. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս՝ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացումներ, որոնք նախատեսված չեն սույն Կանոնների 9-րդ կետում, չեն կատարվում: